ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-21/1-1

ք. Երևան «12» մարտի 2021 թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս աշխատակազմի ղեկավարի օգնական Գ. Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա **ծառայության առավելագույն գինը կազմում է 7 100 000 (յոթ միլիոն հարյուր հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

1-ին չափաբաժնի համար – 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ
2-րդ չափաբաժնի համար – 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ
3-րդ չափաբաժնի համար - 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ
4-րդ չափաբաժնի համար – 2 200 000 (երկու միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ
5-րդ չափաբաժնի համար - 4 200 000 (չորս միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ
6-րդ չափաբաժնի համար - 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ
8-րդ չափաբաժնի համար - 4 500 000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

1-ին չափաբաժնի համար – 7 410 700 (յոթ միլիոն չորս հարյուր տաս հազար յոթ հարյուր դրամ) ՀՀ դրամ

2-րդ չափաբաժնի համար - 15 133 700 (տանհինգ միլիոն հարյուր երեսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ

3-րդ չափաբաժնի համար - 15 198 500 (տասնհինգ միլիոն հարյուր իննսունութ հազար հինգ հարյուր դրամ) ՀՀ դրամ

4-րդ չափաբաժնի համար – 7 270 700 (յոթ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ

5-րդ չափաբաժնի համար - 14 232 500 (տասնչորս միլիոն երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ

6-րդ չափաբաժնի համար - 13 600 400 (տասներեք միլիոն վեց հարյուր հազար չորս հարյուր) ՀՀ դրամ

8-րդ չափաբաժնի համար - 16 086 400 (տասնվեց միլիոն ութսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի

իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ

համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024040 ՀՎՀՀ 02505554	«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ ք. Երևան, Մյասնիկյան 22/4 «Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ Հ/Հ 220083335012000 ՀՎՀՀ 08417829
---------- (ստորագրություն) Կ.Տ.	----------Վ.Բաղդասարյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-21/1-1** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետ *
1	50111130-1	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	600 000	1	ք. Երևան, ծառայությունը մատուցողի կողմից նշված հասցեում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը
2	50111130-2	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	200 000	1		
3	50111130-3	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	900 000	1		
4	50111130-4	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	900 000	1		
5	50111130-5	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	2 000 000	1		
6	50111130-6	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	900 000	1		
8	50111130-8	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	700 000	1		
9	50111130-9	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	900 000	1		

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

_____
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ագրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

_____Վ.Բաղդասարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 12 » մարտի 2021 թ. կնքված
***ՎԱԲՏ-ԳՀԾՁԲ-21/1-1** ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գներ

ՀՀ դրամ

Հ/Հ	SU-1,SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները ըստ չափաբաժինների							
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4	Չափաբաժին 5	Չափաբաժին 6	Չափաբաժին 8	Չափաբաժին 9
		ՈՒԱԶ Պատրիոդ, ՈՒԱԶ 390902	Միցուբիշի L200	Շևռոլե Կապտիվա	Վազ 2121, Վազ 21120	Միցուբիշի Պաջեռո	Տոյոտա Կորոլլա	Տոյոտա Լենդ Քրաուզեր Պրադո	Հյունդաի Տուքսոն
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Բռնկման համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
2	Սառեցման համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
3	Յուղման համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
4	Արտացման համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
5	Կցորդման համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864

11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
13	ABS համակարգի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
16	Թափքի վիճակի ստուգում	891	892	888	908	885	882	839	864
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	891	892	888	908	885	882	839	864
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը								
	1. Շարժիչ								
18	Շարժիչի հանում և տեղադրում	19296	20814	20726	19668	20657	20588	19582	20151
19	Շարժիչի վերանորոգում	59374	104072	103629	60517	103285	102938	97909	100754
20	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	3562	4758	4737	3631	4722	4706	4476	4606
21	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	4453	7434	7402	4539	7377	7353	6993	7197
22	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	16328	19328	19245	16642	19181	19117	18183	18711
23	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	4156	5352	5329	4236	5312	5294	5035	5182
24	Շարժիչի գլխիկի վերանորոգում	13359	20814	20726	13616	20657	14705	19582	20151
25	Փականի խցուկի փոխարինում	891	1487	2961	908	2951	2941	2797	2879
26	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	5937	10407	10363	6052	10328	10294	9791	10075

27	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	7422	10407	10363	7565	10328	10294	9791	10075
28	Հրիչի փոխարինում SOHC	891	1784	1776	908	1771	1765	1678	1727
29	Ատամնավոր փոկի փոխարինում	13359	13381	13324	13616	13279	13235	12588	12954
30	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4156	7434	7402	4236	7377	7353	6993	7197
31	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11875	19328	19245	12103	19181	19117	18183	18711
32	Մխոցային օղակների փոխարինում	25234	44602	44412	25720	44265	44116	41961	43180
33	Թափանիվի հանում և տեղադրում	7422	8920	8882	7565	8853	8823	8392	8636
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ								
34	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	297	297	296	303	295	294	280	288
35	Յուղի պոմպի փոխարինում	1484	2973	2961	1513	10328	8823	9791	10075
36	Ղեկավարման բլոկի վերանորոգում	4453	7434	7402	4539	13279	11764	12588	12954
37	Բռնկման կարգավորում	1484	1487	1480	1513	2361	2353	2238	2303
38	CO կարգավորում	891	892	888	908	1475	1471	1399	1439
39	խարնարակի հանում և տեղադրում	1484			1513				
40	Խարնարակի վերանորոգում	1781			1816				
41	Օդի զտիչի փոխարինում	297	595	592	303	885	882	839	864
42	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	1484	1487	1480	1513	4426	4412	4196	4318
43	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	4453	8920	8882	4539	11804	11764	11190	11515

44	Բենզամղիչի փոխարինում	1484	4460	4441	1513	4426	4412	4196	4318
45	Վառելիքի զտիչի փոխարինում	1484	4460	4441	1513	4426	4412	4196	4318
46	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	2375	4460	4441	2421	7377	2941	6993	7197
47	Տրամլյորի հանում և տեղադրում	891			908				
48	Տրամլյորի վերանորոգում	594			605				
	3. Սառեցման և արտածման համակարգ								
49	Հովհարի փոկի հանում և տեղադրում	594	2379	2369	605	2361	2353	2238	2303
50	Հովհարի հանում և տեղադրում	8906	4460	4441	4539	7377	4412	6993	6333
51	Ռադիատորի հանում և տեղադրում	4156	5352	5329	4236	6492	5294	6154	5757
52	Ռադիատորի վերանորոգում	10390	14867	14804	10590	14755	14705	13987	14393
53	Թերմոստատի փոխարինում	2375	4460	4441	2421	4426	3529	4196	3742
54	Ջրի պոմպի փոխարինում	3562	8920	7402	3631	10328	7353	9791	8636
55	Ընդարձակող բաքի փոխարինում	891	1487	1480	908	2361	2353	2238	2303
56	Խլարարի հանում և տեղադրում	1484	2973	2961	1513	4426	2941	4196	4318
57	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	891	1487	1480	908	2361	1471	2238	1439
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ								
58	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	4453	7434	7402	4539	7377	7353	6993	7197
59	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	2969	5352	5329	3026	5312	5294	5035	5182

60	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	7422	10407	10363	7565	10328	10294	9791	10075
61	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1484	1487	1480	1513	1475	1471	1399	1439
62	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1484	1487	1480	1513	1475	1471	1399	1439
63	ՓՏ-ի հանում և տեղադրում	8906	11894	11843	9078	11804	11764	11190	11515
64	ՓՏ-ի վերանորոգում	28202	41629	41451	28746	41314	41175	39164	40302
65	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	1484	2973	2961	1513	2951	2941	2797	2879
66	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	7422	10407	10363	7565	10328	10294	9791	10075
67	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	2969	4460	4441	3026	4426	4412	4196	4318
68	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	10390	10407	10363	10590	10328	10294	9791	10075
69	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	17812	17841	17765	18155	17706	17647	16784	17272
70	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	16328	16354	16284	16642	16230	16176	15386	15833
71	ԱՓՏ-ի վերանորոգում	103904	104072	103629	105905	103285	117644	97909	100754
72	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	4453	4460	4441	4539	4426	4412	4196	4318
73	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	4453	4460	4441	4539	4426	4412	4196	4318
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ								
74	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	5937	8920	8882	6052	14755	[redacted]	13987	8636
75	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	19296	26761	37010	19668	44265	[redacted]	41961	35984
76	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	4453	5947	5922	4539	5902	[redacted]	5595	5757

77	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	3562	4460	4441	3631	4426		4196	4318
78	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	2969	4163	4145	3026	4131		3916	4030
79	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	3859	5352	5329	3934	5312		5035	5182
80	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	4453	5352	5329	4539	5312		5035	5182
	6. Առջևի և հետևի կամրջակներ								
81	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	7422	11894	13324	7565	14755		13987	12954
82	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	19296	28248	28128	19668	29510		27974	27347
83	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	10390	13381	13324	10590	13279		12588	12954
84	Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադր.	3562	5352	5329	3631	3541	3529	3357	3454
85	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	2375	4460	4441	2421	1771	1765	1678	1727
	7. Կախոց								
86	Տրավերսի հանում և տեղադրում	4453	10407	10363	4539	16230	8823	15386	12954
87	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	3562	4460	4441	3631	4426	3529	4196	4318
88	Անվակունդի առանցքակալի փոխարինում	3562	4460	4441	3631	4426	3529	4196	4318
89	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	3562	3568	3553	3631	3541	3529	3357	3454
90	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	3562	4460	4441	3631	4426	3529	4196	4318
91	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	1781	2676	2665	1816	2656	2647	2518	2591
92	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	1484	2676	2665	1513	2656	2647	2518	2591